ԳԼՈՒԽ Ե.

Շմաւոն ազգականն Քրիստոսի. Կատարումն նորին։ Եղիսկոպոսունք Ի Հրէից հաւատացելոց։ Շիմաւոն Երուսաղէմի յԱդրիանոսէ։ Կատարումն և հալածումն Հրէից։ Մարկոս Եպիսկոպոս Ի հեթանոսաց հաւատացելոց, մինչ Ի կատարումն Աղեքսանդրոսի։

ՍՈՒՐԲՆ Շմաւոն, որ և Սիմէոն կամ Սիմոն, եղբայր Յակոբայ արդարոյ, որդի Կղէոպայ, եղբօրորդի Յովսեփայ Աստուածահայր կոչեցելոյ եւ ազգական Քրիստոսի, յետ համբառնալոյ Փրկչին մերոյ չրջեցաւ յայլ եւ այլ տեղիս, որպէս և այլ առաքեալքն. քարոզեաց զաւետարանն Հրէից և հեթանոսաց, իբրեւ հաւատարիմ վկայ ականատես եւ սպասաւոր Բանին Աստուծոյ կրեաց զազգի ազգի չարչարանս և զնեղութիւնս վասն անուան Տեառն։ Իսկ զկնի կատարման եղբօրն իւրոյ Յակոբայ արդարոյն և աւերածոյն Երուսաղէմի, ժողովեցան աշակերտք աշակերտաց առաքելոցն յամենայն կողմանց, որք մնացեալ էին յայնմ ժամանակի հանդերձ ազգատոհմաւ Տեառն մերոյ, և խորհրդով եդին յԱթոռ Եպիսկոպոսութեան Երուսաղէմի զծերունին Շմաւոն, իբրեւ արժանաւոր այնմ պատուոյ և աստիճանի և օրինաւոր յաջորդ եղբօր իւրոյ Յակոբայ։ Որ և զառաքելական քարոզութիւնն եւս քան զեւս Ի կիր արկեալ քարոզէր զՔրիստոսի Աստուածութիւնն ընդ ամենայն կողմանս Պաղեստինոյ. չինէր զեկեղեցիս ըստ տանելոյ ժամանակին, եւ անպակաս առնէր զքահանայս և զպաշտօնեայս, և այսպէս եկաց յԱթոռն հովութեան ամս բազումս, մինչեւ հասանիլ նմա լի արդեամբք յերկար ծերութիւն։

Պատմէ Հեգիսիպպոս առ Եւսեբեայ, թէ զկնի Յակոբայ սա եկաց եպիսկոպոս Երուսաղէմի. զի ամենայն ոք Ի նա եղեալ էր զմիտս, և վասն այսորիկ կոչէին զեկեղեցին կոյս. զի ցայն վայր ոչ էր ապականեալ Ի լուրս ընդունայնս։ Այլ սկսաւ զառաջինն Թէբաթիոս ապականել, զի ոչ եղեւ եպիսկոպոս, եւ է մին յեօթանց հերձուածոց անտի, ուստի Սիմոնն էր. եւ ապա յաւելու, զի ամենե-